ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 24-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու բակում տեղադրված Հայոց Ցեղասպանության 50-ամյակին նվիրված հուշաքարի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն մեր բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության համար և ծաղկեպսակներ դրվեցին՝ գլխավորությամբ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Հարություն սրկ. Համբարձումյանի: Արարողության ավարտին բոլոր ներկաները գլուխ խոնարհեցին և ծաղիկներ դրեցին հուշաքարին:

Հոգեհանգստից հետո բոլոր ներկաներն ուղևորվեցին Մարդասիրական ճեմարան, որտեղ ներկա գտնվեցին ճեմարանի սաների կողմից կազմակերպած հուշ-ցերեկույթին: Մասնակիցները հանդես եկան բանախոսություններով և ասմունքով ու երաժշտական կատարումներով: Միջոցառման ավարտին փակման խոսք ասաց Հարություն սրկ. Համբարձումյանը՝ ևս մեկ անգամ ոգեկոչելով ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը և բարձր գնահատելով ճեմարանի սաների ու հանդիսության կազմակերպիչների տքնաջան աշխատանքը:

Հանդիսությանը ներկա էին հնդկահայոց Եկեղեցական խորհրդի անդամներ, ճեմարանի դասախոսական ողջ կազմը, համայնքի ներկայացուցիչներ, հյուրեր և սաներ:

ԴԻՎԱՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ